

ՔԱՐԱՇԱՄԲԻ ԴԱՄԲԱՆԱԴԱՇՏԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ
ՔԱՌԱԿՈՒՍԻՆ (2008 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐ)

Ֆիրդուս Սուրադեան

ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի արշաւախումբը¹ հետախուզաստուգողական պեղումներ է կատարել Կոտայքի մարզի Քարաշամբ գիւղի յայտնի դամբանադաշտի հարաւարեւելեան մասում²: Ուսումնասիրութիւնք քառակուսին (15.0մx15.0մ մակերեսով, աղ. 1) համատարած ծածկուած էր կցակառոյց կրոմլեխներէրի ցանցով: Փաստացի համարակալումը³ էի ընդգրկում քառակուսու բոլոր համալիրները, իսկ կցակառոյցներէ տեղադրութեան համեմատական ուսումնասիրութեան ընթացքում օգտագործուել են նաեւ այն դամբարաններէ մանրամասները (լուս. 1, 2, աղ. 2, 3),⁴ որոնց ուսումնասիրութիւնը թողնուել է նախնական փուլում:

Դամբարան 1: Քառակուսու արեւմտեան անկիւնում էր: Կրոմլեխահատուածը խիտ բազալտից էր, իսկ թիւ 2 դամբարանին մերձեցող մասում կարմիր անդեզիտի տարաչափ երեք կտոր կար: Զրահը սեւահողախաւոր բազալտի զանգուածից էր՝ կարմիր անդեզիտի մանր կտորներով, մա-

սամբ գետներես հարթասալերը⁵ տարբեր գիրքերով էին: Առայժմ նախորդում է թիւ 4 համալիրին, իսկ թիւ 2 դամբարանի քարազրահին նման լիցք ունենալն ու ոչ կցակառոյց տեղադրութիւնը ցուցում են երկուսի հաւանական համաժամանակեայ լինելը (լուս. 1, 2, աղ. 2, 3):

Դամբարան 2: Թիւ 1, 3, 4 եւ 8 դամբարաններէ միջակայքում էր: Կրոմլեխը (Մ՝ հիւսիս-հարաւ⁶ 3,25մ) ինքնին անկախ էր: Կցակառոյց էին թիւ 3, 4 եւ 8 դամբարանները (լուս. 1, 2, աղ. 2, 3): Կանոնիկ կրոմլեխը տարաչափ բազալտակտորներէրից էր՝ առաւելապէս խիտ, արեւելեան երեքը ծածկասալ-ժայռաբեկորներէ տեսակից էին, իսկ հարաւարեւմտեան կողմի երկուսը՝ կարմիր անդեզիտ:⁷ Տարածքը լցուած էր սեւահողախին բազալտից⁸ տարբեր բազալտի կտորներէրից խառնուրդով (խճի եւ մանր գետաքարի նօսր պարունակութեամբ), նաեւ Արթիկի քարհանքերին բնորոշ տուֆի կտորներով⁸: Հարաւարեւմտեան հատուածի լիցքից եւ

1 Արշաւախումբի կազմը՝ Ֆ. Մուրադեան (պետ), Գ. Խաչատրեան (վարորդ-պրեպարատոր), Ա. Դալթեան (նարտարապետ, ԵՊՀ):
2 Հետախուզական պեղումներէ նպատակը դամբանադաշտի մնացեալ ամբողջ տարածքի լիովին եւ վերջնական պեղման աշխատանքներէ փաստացի նախահաշիւ կազմելն էր:
3 Համալիրներէ ընդհանուր համարակալման հերթականութիւնը հատուածաբար չի համընկնում դամբարաններէ առկայ կցակառոյց յաջորդականութեանը:
4 Քառակուսու մակերեսի ընդհանուր յատակագիծը պատկերող աղիւսակներում, տուեալ դամբարանի կրոմլեխահատուածից բացի, ուրիշ ոչ մի նարտարապետական բացում մանրամասն չի պատկերուած:

5 Քառակուսու բացումը գրեթէ բոլոր համալիրներէ ծածկասալերը կապտերանգ, տարբեր հաստութեան ու բնականից խիտ հարթ մակերեսով, համասեռ խիտ կազմութեամբ բազալտի տարաչափ հատուածներէրից են, որոնք անուանուել են հարթասալ ընդհանուր «աւանդակա՞ծ» ծածկի նշանակութեամբ օգտագործուած այլ տիպի սալերից տարբերակելու եւ միայն Քարաշամբի հնավայրին բնորոշ լինելն առաւել շեշտելու համար:
6 Տրամագիծը. տրուելու է հիւսիս-հարաւ առանցքով:
7 Քառակուսու ընդհանուր յատակագիծի վրայ կարմիր անդեզիտները նշուած են սեւ գոյնով (աղ. 2 եւ 3):
8 Ծերտագրական տեղադրութիւնը բացառում է նրա՝ նորագոյն ժամանակներին պատկանելը:

կրոմլեխի հարաւարեւելեան կենտրոնական քարի արտաքին կողմից գտնուեցին տարանջատ լցրած երկու անօթի բեկորներ: Հարաւարեւելեան երկու ծածկասալերը տձեւ ու ոչ խիտ բազալտ ժայռի բեկորներ էին, իսկ հիւսիսարեւելեան հատուածի հարթասալը դրուած էր ոչ հորիզոնական դիրքով (աղ. 4): Դրանց միջակայքում սեւահողախին բազալտից մանր գետաքարերի եւ աւաղախճային զանգուածի խառնուրդ էր՝ անփոփոխ մինչեւ կաւանօթներէ հորիզոն: Դամբանախուցը (երկ.՝ 1,0մ, լայն.՝ 0,96մ, խոր.՝ 0,8մ) առանցքով հիւսիս-արեւմուտք հարաւ-արեւելք էր (510 շեղում⁹ արեւմուտք)՝ անխնամ փորուած ծովալճային նստուածքներէ ամուր շերտում¹⁰: Հիւսիսարեւելեան անկիւնում դրուած 3 խեցանօթներէրից մէկը տեղում ճզմուած էր, իսկ միւսի բեկորները կոյտի ձեւով էին: Կաւանօթներէ մակարդակից լիցքի քարային բազալտից նկատելիօրէն նօսրանում էր: Ակնյայտ այրուածքի հետքերով¹¹ վերջոյթներէ ոսկորներէ կտորատուած տարաչափ հատուածներ (հաւանաբար՝ հասուն տարիքի կնոջ) բացուեցին յատակամերձ շերտի տարբեր կէտերում: Սա ապացուցում է դիմասնատման փաստը (աղ. 4): Դամբանախցի յատակի կենտրոնական մասում փորուած փոսորակը լցուած էր նոյն քարահողախին խառնուրդով: Այստեղից ոչ մի իր կամ ոսկոր չգտնուեց: Տարբեր հորիզոններէրից խեցանօթներէ դուրս գալը եւ յատակին կոյտով լցուած անօթները թոյլ են տալիս եզրակացնել, որ կաւանօթները դրսում էին կտորում եւ մի մասը լիցքի ընթացքում

սփռում-աւելացնում էին: Սա հաւանաբար ուղեկցում էր համապատասխան արարողութեամբ: Խցից դուրս՝ լիցքի մէջ եւ դրսից յարող տարածքում, փաստագրուած անօթներէ ոչ մի բեկոր չգտնուեց: Սակարող է հիմնաւորել այն ենթադրութիւնը, որ նախ՝ դամբանախցի աւարտը եւ յետոյ ընդհանուր շինարարութեան վերջը նշանաւորուել է մաքրագործման արարողութեան մաս կազմող ծիսական ակտերով¹²:

Կաւանօթները¹³ (աղ. 4) ՈՒԲ մշակոյթի երկրորդ փուլի ժամանակաշրջանից¹⁴ են եւ թուագրուում են Ք. ա. ժ.Գ. դարի II կէսով:

Ներկայացուած դամբարանը քառակուսու՝ ՈՒԲ դարաշրջանին վերագրուող համալիրներէրից վաղագոյնն է: Սրանով սկսում եւ թիւ 32 դամբարանով աւարտում է ուսումնասիրուած համալիրներէ կազմուած ընթացքը՝ որպէս արեւմտեան հավերժութեան կենտրոնաձիգ տուածում առանձնացող՝ կենտրոնաձիգ յաջորդական կցակառոյց անընդհատական շղթայ, ընդհանուր թուագրական խնդիրների համատեքստում: Մնացեալների ընդհանուր վերլուծութիւնն առանձին ուսումնասիրութեան նիւթ է: Կենտրոնաձիգ միասնորոշութեան կցակառոյց համատեքստով յաջորդական իրողութեան շրջանակներում, յաջորդական ներկայացուող նակներում, յաջորդական հնարաւոր են թուագրական սանդղակում հնարաւոր են

9 Բոլոր շեղումները՝ հիւսիս-հարաւ մագնիսական առանցքի հիւսիսից:
10 Նախապատմական խորքային նստուածքներէ շերտ. տարաչափ գետաքարերի եւ բաց երանգաւորմամբ կաւ-աղերի սերտօրէն ցեմենտուած եւ հատուածներով խիտ կարծր գանգուած է:
11 Ուսումնասիրուած բոլոր դամբարաններէ մարդաբանական նիւթը ըստ Լ. Աղիկեանի:

12 Դամբանախցում եւ լիցք-գրանուծ նիւթական մնացորդներէ բազմաշերտ դնելու-սփռելու տվորոյթը հեղինակի կողմից փաստագրուել է վաղբրոնզեդարեան առաջին փուլի համալիրներից սկսած: Սա վկայում է թաղման ծեսում կիրառելի արարողութեան հնագոյն արմատների մասին:
13 Գտնածօները նախագրել է Ա. Դալթեանը, խեցեղէնը վերականգնել է Ա. Գրիգորեանը:
14 E. Khazadian, Metsamor 2, COPHS 1, Paris 1995, p. 61-62, fig 23; pl. 21. R. S. Badalyan, P. S. Avetisyan, Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, I, Mt. Aragats and surrounding Region, BAR, International Series 1697, Oxford, 2007, p. 189-190, pl. II-III, p. 284-285, pl. VIII-IX.

ցայսօր շրջանառուող ժամանակագրութեանը հակասող փաստագրումներ:

Դամբարան 3: Կցակառոյց էր միայն թիւ 2 դամբարանին: Առկայ տեղադրական մանրամասները ցուցում էին թիւ 2 դամբարանից ուշ լինելը (լուս. 1, 2, աղ. 2, 3):

Դամբարան 4: Թիւ 1, 2, 5 եւ 8 դամբարանների միջակայքում էր: Ինքնին չամբողջացող անկանոն կրոմլեխը (Մ՝ 3,4մ) տարբեր բազալտներից էր, կից էր թիւ 1 եւ 2 դամբարաններին, իսկ թիւ 1-ին յարող բեկորը կարմիր անդեզիտ էր (լուս. 1, 2, աղ. 2, 3): Տարածքը լցուած էր սեւահողալավային բազալտիչով, գերազանցապէս մանր գետաքարերի խառնուրդով (մի քանի խոշոր): Անմիջականորէն չէր ծածկում հարթասալերը, որոնց վրայ լցուած էր ծովալճային շերտի փորուածքի քարազուրկ, մանրահատիկ խճախառն սպիտակաուռն զանգուած՝ 2-3մ հզօրութեամբ: Ծածկի հարաւարեւմտեան հատուածը բազմաշերտ, համեմատաբար հորիզոնական դիրքերով դրուած տարբեր չափերի ու հաստութեան հարթասալերից էր: Դրանց առանցքի՝ ճշգրտորէն հիւսիսը ցուցող մասում մէկ, իսկ հարաւը ցուցող մասում երկու եզրափակող հարթասալեր էին՝ տեղակայուած գրեթէ նոյնական աստիճանի թեքութեամբ, դէպի դամբանախցի տարածք (աղ. 5): Դամբանախուցը (երկ.՝ 1,5մ, լայն.՝ 0,8մ, խոր.՝ 0,6մ)՝ առանցքով հիւսիս-արեւելքից հարաւ-արեւմուտք էր (470 շեղում արեւելք), փորուած էր ծովալճային նստուածքների ամուր շերտում եւ լցուած էր փափուկ ու գորշազոյն կաւահողային բազալտիչով՝ մանր գետաքարերի խառնուրդով: Խցի տարբեր հորիզոնների կէտերից գտնուեցին խեցատներ եւ ոսկորների մի քանի շատ փոքր բեկորներ՝ միայն վերին հորիզոնից: Յատակամերձ շերտում գտնուեց բրոնզէ ապարանջան՝ առանց որեւէ ոսկորի: Յատակի ամբողջ մակերեսի շերտում ոսկորի ոչ մի բեկոր կամ հետք ընդհանրապէս չնկատուեց: Անհարթ յատակին բացուած 9

կաւանօթներից 8-ը կենտրոնական հատուածում էին, վերջինը՝ առաձնացած դէպի հարաւ-արեւմուտք (աղ. 5): Անօթները կենտրոնական առանցքը գրեթէ նոյնութեամբ համընկնում էր վերը նշուած հարթասալերի հիւսիս-հարաւ ուղղուածութեանը, իսկ կտորած քրեղանի երկու հատուածները հակադիր պատերի մօտ էին: Դամբանախցի լիցքի ընդհանուր շերտագրական մանրամասները թոյլ են տալիս այստեղ եւս փաստագրել լիցքի կատարման ընթացքում նիւթեր լցնելու-դնելու սովորոյթը:

Տեղադրութեամբ դամբարանը յաջորդում է թիւ 1 եւ 2 համալիրներին եւ ըստ գտածոների (աղ. 5) թուագրուում Բ. ա. ժ. Դ. դարի վերջ:

Դամբարան 5: Թիւ 4, 8, 6 եւ 10 դամբարանների միջակայքում էր: Չամբողջացող, անկանոն կրոմլեխը (Մ՝ 3,3մ) խիտ բազալտից էր: Կից էր թիւ 4 դամբարանին (լուս. 1, 2, աղ. 2, 3): Տարածքը լցուած էր սեւահողային բազալտիչով տարբեր խտութեան բազալտի մանր կտորների խառնուրդով: Կրոմլեխի իւրաքանչիւր բազալտից չէր ներքին կողմի հիմնամասում՝ բնահողի վրայ, դրուած էին կարմիր անդեզիտի տարաչափ փոքր կտորներ: Դամբարանի կենտրոնական առանցքի՝ ճշգրտորէն հիւսիսը ցուցող կէտում կրոմլեխի բազալտիցիչը կարմիր անդեզիտի փոքր կտոր էր:

Ծածկն առանցքով հիւսիս-արեւելքից հարաւ-արեւմուտք էր: Տարբեր մեծութեան, նաեւ՝ բազմաշերտ դրուած հարթասալերը նոյնական անկիւնային դիրքով էին, չտարբերուող բացուածքներով՝ դէպի դամբանախցի կենտրոն, իսկ հիւսիսարեւելեանի հորիզոնական դիրքը պահելու համար դրուած էին տարբեր մեծութեան ուղղորդիչներ: Երկու կտորից կենտրոնականն առաջին հայեացքից ժամանակի ընթացքում նստուածքի հետեւանքով էր բաժանուել երկու տարաչափ մասերի: Բայց տե-

ղադրական ու շերտագրական մանրամասները հիմնաւորուած փաստում են, որ շինարարները միտումնաւոր են դա արել նախքան վերջնական դիրքով տեղադրելը¹⁵: Հաւանաբար դա կատարուել է թաղման ծէսի արարողակարգին համապատասխան: Դրա արեւմտեան կողմում՝ լայնական առանցքով հիւսիսից հարաւ, ուղղահայեաց կանգնեցուած փոքր հարթասալից ստելայի ակնյայտ անխախտ դիրքը եւս ապացուցում է հարթասալի նախօրօք երկտակուած լինելը (աղ. 6):

Դամբանախուցը (երկ.՝ 1,5մ, լայն.՝ 0,87մ, խոր.՝ 1,07մ) եւս առանցքով հիւսիս-արեւելքից հարաւ-արեւմուտք էր (500 շեղում արեւելք)՝ փորուած ծովալճային նստուածքների շերտում: Հարաւարեւելեան պատի վերին եզրագիծն ամբողջութեամբ թեք դրուած, տարաչափ երեք հարթասալով սալարկուած էր, (աղ. 6): Կարծես կրկնուած էր թիւ 4 դամբարանի փաստագրուած իրողութիւնը: Խցի հիւսիսարեւելեան հատուածում լցուած էր փափուկ կաւահողային բազալտիչով խճաքարի խառնուրդ, իսկ մնացեալ մասում՝ քիչ ամուր զանգուած: Լիցքը 0,3մ-0,4մ խորութիւնից համատարած դարձաւ փափուկ կաւահողային բազալտիչով խճային խառնուրդ: Այս մակարդակից լիցքի տարբեր հորիզոնների մի շարք կէտերից գտնուեցին խեցատներ եւ 25-35 տերեւական կնոջ ոսկորների կտորներ, այդ թւում՝ գանգատուփի տարաչափ բեկորներ, իսկ խիստ անհարթ յատակին խողովակաձեւ ոսկորների, կոնքոսկրի եւ գանգատուփի հատուածներ էին՝ այրուածքի ակնյայտ հետքերով եւ մասամբ ծածկուած նոյն քրե-

ղանի բեկորներով: Գտնուեց ծարիրից (անագ) 2 վզնոց: Բրոնզից 2 ապարանջաններ, ըը (աղ. 6) յատակի տարբեր կէտերում էին, առանց որեւէ ոսկորի: Հարաւային պատին հարուած անօթ կար, նաեւ՝ այլ անօթի բեկորներ: Տարբեր մեծութեան 2 փոսորակներն առանցքով հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք էին, հողորդակից չէին ու լցուած էին այնպիսի խառնուրդով, որը միայն քարի (մանր գետաքար) խտութեամբ էր տարբերուում դամբանախցի ստորին հորիզոնում տեղում ճզմուած անօթ էր եւ հորիզոնում տեղում ճզմուած անօթ էր եւ այլ անօթի բեկորներ: Տարբեր կէտերից ու խորութիւններից գտնուեց նաեւ գանգատուփի տարբեր մեծութեան մի քանի բեկոր: Դամբանախցի շերտագրական մանրամասները փաստում են, որ լիցքի կատարման ընթացքում պարբերաբար աւելացուել են նիւթեր, իսկ փոսորակների շերտագրական վիճակների զանազանութիւնը հաւանաբար կարելի է բացատրել նրանց իմաստակիրառական տարբերութեամբ:

Տեղադրութեամբ դամբարանը յաջորդում է թիւ 4 համալիրին. պէտք է ժամանակագրել նրանից յետոյ եւ նիւթերով (աղ. 6) թուագրել Բ. ա. ժ. Դ. դարի վերջ Բ. ա. ժ. Գ. դարի սկիզբ:

Դամբարան 6: Թիւ 5, 8, 9, 10 եւ 11 դամբարանների միջակայքում էր: Ինքնին չամբողջացող, գրեթէ կանոնիկ կրոմլեխը (Մ՝ 2,75մ) խիտ բազալտից էր: Կից էր թիւ 5 դամբարանին (լուս. 1, 2, աղ. 2, 3): Վերին շերտը սեւահողային բազալտիչով գեղարային խճի խառնուրդ էր, իսկ յատաքարային խճի խառնուրդ էր, իսկ յատաքարային խճի խառնուրդով գեղարային նստուածքային բնահողի փորուած լճային նստուածքային բնահողի փորուածքի խառնուրդ: Անմիջապէս սալաքարերի վրայ մարդու գանգատուփի բեկոր էր եւ խողովակաձեւ ոսկորների փոքր հատուածներ: Ծածկը հատուածներով դրուած տարաչափ տարբեր անկիւններով դրուած տարաչափ հարթասալերից էր (աղ. 7), որոնց միջեւ եւ անմիջապէս դրանց ներքեւում համատա-

15 Ո՛չ այս, ո՛չ էլ մնաց այլ հարթասալերի վրայ հարուածի հետք չկայ: Ընդհանրապէս քառակուսուտարածքում բացուած ոչ մի հարթասալ հարուածի որեւէ հետք չուի: Խարոյկի հետք էլ չի փաստուած (տաքի ու սառի աղէցորթեամբ քարը ճեղքելու համար): Անյայտ է մնում խիստ բարակից միջնաբաւ քառականգն հաստ հարթասալերի ստացման եղանակը:

Դամբարանը յաջորդում է առայժմ թիւ 11 համալիրին եւ, ըստ յայտնաբերուած նիւթերի (աղ. 12), պէտք է թուագրել Ք. ա. ժ.Գ. դարի սկզբով:

Դամբարան 13: Կցակառոյց էր թիւ 12 դամբարանին: Կից էր թիւ 14 դամբարանը (լուս. 1, 2, աղ. 2, 3):

Դամբարան 14: Թիւ 12, 13 եւ 15 դամբարանների միջակայքում էր: Ինքնին չամբողջացող, անկանոն կրոմլեխը (Մ՝ 3,7մ) միանման բազալտից էր: Կից էր թիւ 12 եւ 13 դամբարաններին, իսկ թիւ 15-ը կցակառոյց էր (լուս. 1, 2, աղ. 2, 3): Տարածքը մինչեւ ծածկը լցուած էր սեւահողի եւ ոչ խոշոր գետաքարի խառնուրդով: Հարթասալերով կառուցուած ծածկը՝ մերձենում էր կրոմլեխին, իսկ հիւսիս-արեւելքում բացուածներն ուղղահայեացութեանը մօտ անկիւնով էին: Հարթասալերով չծածկուած միջակայքում լցուած էր նախորդից բազալտութեամբ ակնյայտօրէն տարբերուող տարաչափ խիտ գետաքարով (ծովալճային նստուածքային շերտի փորուածքից եւս), նօսր խճով եւ մանր ջրաւազով սեւահողային բազալտիչով զանգուած: Ծածկի հարաւային հատուածի արեւելեան եւ արեւմտեան կողմերը եզերապատուած-սալարկուած էին կրոմլեխատիպ շարքերով, որոնց յարող տարբեր չափի հորիզոնական հարթասալերը բազմաշերտ էին եւ տարանջատուած անխառն սեւահողով: Դամբանախցի վերին հորիզոնը (հատուածաբար) եւ պատերի կտրուածքի մի մասը սալարկուած էին տարբեր անկիւններով դրուած հարթասալերով: Ներկայացուած դամբանախցի ընդհանուր ճարտարապետական եւ հարթասալերի շերտագրական մանրամասները մէկ անգամ եւս հիմնաւոր ապացուցում են, որ հարթասալերով կառուցուած ծածկի առաջացումն ընդհանրապէս, իսկ բազմազան տեղադրութեամբ եւ շատ անգամ խստագոյնս տարբերուող անկիւններով դնելը մասնաւորապէս, խորապէս իմաստաւորուած է եւ

կանոնաւորուած-ուղղորդուած է թաղման ծէսի արարողակարգի համապատասխան գրոյթներով:

Դամբանախուցը (երկ.՝ 1,78մ, լայն.՝ 0,96մ, խոր.՝ 0,9մ) առանցքով հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք էր (280 շեղում արեւմուտք), անփոյթ փորուած ծովալճային նստուածքային շերտում (աղ. 13): Ներկայացուած լիցքի տարբեր հորիզոնների բազմաթիւ կէտերից գտնուած էին մարդկային կմախքի տարբեր հատուածներ ռսկորների բեկորներ եւ մանր խեցատներ: Նիւթերի շերտագրական եւ տեղադրական մանրամասները ցուցում են, որ կտրուել են խցից դուրս, դամբարանի տարածքից ու մերձակայքից հեռու եւ պարբերաբար աւելացուել են լիցքը կատարելու ընթացքում: Դամբանախցի անհարթ յատակի վրայ բացուած 20-30 տարեկան կնոջ ռսկորների հատուածներն անկանոն դասաւորութեամբ էին, կտրատուած եւ այրուածքի ակնյայտ հետքերով, իսկ հիւսիսարեւելեան անկիւնում բացուած վերջոյթների ռսկորներից երկուսը պատի կտրուածքին զուգահեռ դիրքով էին, իսկ յատակի վրայի երրորդը՝ հորիզոնական: Դրան հարաւ-արեւելքից սերտօրէն յարում էր հակառակ դիրքով դրուած ստորին ծնօտի մեծ մասն՝ ատամնաշարով (աղ. 13): Դամբանախցի ռսկորաբանական մնացորդների քննութիւնը ցոյց է տալիս, որ առկայ են խիտ թերի մարդկային կմախքի անատոմիական տարբեր մասերի բեկոտուած հատուածներ: Ռսկորաբանական մնացորդների շերտագրական եւ տեղադրական առկայ իրավիճակները ցուցում են կատարուած դիամասնատման ու ռսկորների կտրատման իրողութիւնը, իսկ տեղադրական որոշ մանրամասներ թոյլ են տալիս ենթադրել, որ դա կատարուել է մասնակի դիակրիզումից յետոյ:

Յատակագծային տեղադրական մանրամասներից պարզ է, որ դամբարանը յաջորդում է առայժմ թիւ 12 եւ 13 համալիր-

ներին եւ պէտք է թուագրել թիւ 12 դամբարանից յետոյ՝ Ք. ա. ժ.Գ. դարի I կէսով:

Այս դամբարանով եզրափակուած է քառակուսու՝ դէպի հարաւ-արեւելք եւ արեւմուտք համալիրների ուսումնասիրութիւնը, բայց տարածքից դուրս՝ նշուած կողմերում, մասամբ գետներես, քարային տարաչափ շարերը ցուցում են, որ թիւ 2 դամբարանից սկիզբ առած, անընդհատ յաջորդական կից սկզբունքով կառուցապատուած շարունակուած է:

Դամբարան 15: Թիւ 9, 11, 12, 14, 16, 19 եւ 20 դամբարանների միջակայքում էր: Ինքնին չամբողջացող անկանոն կրոմլեխը (Մ՝ 3.9մ) տարբեր բազալտից էր: Կցակառոյց էր թիւ 9 եւ 14 դամբարաններին՝ ուղղակի, իսկ թիւ 12-ին՝ լրացուցիչ կրոմլեխային հատուածով (լուս. 1, 2, աղ. 2, 3): Տարածքում լցուած էր աւազահողի բազալտիչով ոչ խոշոր գետաքարերի խիտ խառնուրդ, իսկ ծածկասալերի վրայ բարակ շերտով լցուած էր ջրաւազ՝ գետաքարի մանրահատիկ խճով: Լիցքի կրոմլեխատիպ մի քանի բազալտներն անկանոն դասաւորութեամբ էին: Կենտրոնում բացուած գորշագոյն բազալտից տարաչափ 2 ծածկասալերը հիւսիս-արեւելքից հարաւ-արեւմուտք էին եւ այլ քարատեսակից¹⁶: Կրոմլեխի միջակայքի լիցքից գտնուեցին խեցատներ: Սալերի հարաւարեւմտեան կողմից անմիջական յարող տարածքի լիցքի ստորին հորիզոնում բացուած մոխրաշատ հողը գերազանցապէս լցուած էր սալերի ծածկոյթից դուրս՝ սպիտակ կրաքարերի մակերեսին, անմիջապէս նրանց վրայ: Ծածկասալերից յետոյ բարակ շերտով լցուած էր անխառն սեւահող: Դամբանախցի հարաւում սպիտակ կրաքարերով՝ երկշարք, իսկ արեւ-

մուտքում՝ 2 կտորից¹⁷ շարուածք էր արուած (լուս. 1, աղ. 14): Հարաւային կողմի կրաքարերի վերին շարքը մտած էր խցի տարածք: Դամբանախուցը (երկ.՝ 1,61մ, տարածք.՝ 0,77մ, խոր.՝ 0,8մ) ծածկասալերի ուղղային (370 շեղում արեւելք), դուածութեամբ էր (370 շեղում արեւելք), փորուած էր ծովալճային նստուածքային շերտում եւ հարաւարեւմտեան մասում փոքր հատուածով դուրս էր մնում ծածկափոքր հատուածով դուրս էր մնում ծածկափոքր հատուածով լցուած էր սալերից: Խցի վերին մասում լցուած էր գորշագոյն (հաւանական է՝ մոխրախառն) համեմատաբար ամուր կաւահողային բազալտիչով խիտ քարախճային (մեծ մասը գետաքար եւ մի քանիսը ծովալճային նստուածքային շերտից) խառնուրդ, որը մինչեւ յատակ չհարունակուեց: Սրա տարբեր հորիզոնների մի շարք կէտերից գտնուեցին մարդու տարբեր մարմնամասերի ռսկորների կտորներ եւ խեցատներ: Դամբանախուցը կառուցուած էր խիտ անփոյթ: Յատակին բացուած փոսորակը նոյն խառնուրդով էր: Յատակին մօտ շերտում քարի խտութիւնը նոյնն էր, իսկ հողային բազալտիչը՝ այլ (նօսր ջրաւազ ու մանր խիճով սեւահող): Կաւանթները (ամբողջական ու կտրատուած՝ կոյտով) խցի հիւսիսարեւելեան պատի մօտ էին, իսկ մնասիսարեւելեան պատի մօտ էին այրուածքի ցեղ խեցատներն ու ակնյայտ այրուածքի հետքերով մարդկային ռսկորները գտնուեցին յատակի ողջ մակերեսից՝ կտրատուած եւ առանց որեւէ կանոնաւորութեան (աղ. 14): Գտածօների շերտագրուած իրատեղադրական առկայ փաստագրուած իրավիճակը հնարաւորութիւն է տալիս եզրավիճակը հնարաւորութիւն է տալիս եզրակացնելու, որ խցից դուրս եւ դամբարանի տարածքից հեռու իրականացուած ծիսական արարողութեան հետեւանքով (նաեւ կան արարողութեան հետեւանքով նիւզիակիզման) նման վիճակի բերուած նիւթերի մի մասը պարբերաբար դրուել-աւելթերի մի մասը պարբերաբար ընթացքում: Լացուել է լիցքի կատարման ընթացքում: Ըստ ամենայնի, սպիտակ կրաքարի նման

16 Քառակուսու մակերեսում բացուած համալիրներից միայն թիւ 2, 15 եւ 20 դամբարանների ծածկերն էին տարբերում մնացեալներից, որոնք բոլորն էլ միատեսակ բազալտից էին:

17 Ըստ երկրաբան Գ. Խաչատրեանի՝ խոր ջրային ծագում ունեն:

(առայում եղակի) կիրառութիւնը կարելի է մեկնաբանել որպէս միայն յատուկ (խիստ հազուադէպ) առիթով կանոնակարգային պարտադիր կատարման ենթակայ տարրի իրականացում:

Ըստ տեղադրական մանրամասների թիւ 15 դամբարանն անընդհատական կցակառոյց շղթայում անմիջապէս չի յաջորդում թիւ 9 ու նախորդում թիւ 14 համալիրներին. այն աւելի ուշ է կից յարմարեցուցել: Նիւթերը (աղ. 14) հնարաւորութիւն են տալիս դամբարանը թուազրել Ք. ա. ժ. դարի կէսով:

Դամբարան 16: Թիւ 9, 17, 18 եւ 19 դամբարանների միջակայքում էր: Ինքնին չամբողջացող, անկանոն կրոմլեխը (Մ՝ 3,15մ) միանման բազալտից էր: Կից էր թիւ 9 եւ 18 դամբարաններին, իսկ թիւ 17 եւ 19 դամբարանները կցակառոյց են (լուս. 1, 2, աղ. 2, 3): Տարածքը լցուած էր խիտ գետաքարի եւ ջրաւազի նօսր պարունակութեամբ կաւահողի խառնուրդով, որի մէջ առկայ կրոմլեխի տիպի բազալտները կամայական տեղադրութեամբ էին (աղ. 15): Տարաչափ հարթասալերից ծածկի միայն հիւսիսարեւմտեան կողմի սալն էր քիչ թեք դրուած, իսկ ակնյայտօրէն դամբանախցի մէջ խորացած եւ նրա հարաւարեւմտեան շարունակութիւնը հանդիսացող հատուածի ամբողջ պարագծի կտրուածքը սալապատուած էր գրեթէ ուղղահայեաց դրուած հարթասալերով: Հարաւարեւելեան կողմի հարթասալերը յատակի վրայ չէին: Միջակայքի չծածկուած հատուածում նոյնական լիցքը շարունակուում էր: Դամբանախուցը (երկ. 1,41մ, լայն. 0,9մ, խոր. 0,7մ) առանցքով հիւսիսարեւմուտքից հարաւարեւելք էր (240 շեղում արեւմուտք): Փորուած էր ծովալճային նստուածքային շերտում: Տարբեր հորիզոնների բազմաթիւ կէտերից դուրս էին գալիս 50-ն անց տղամարդու կմախքի ոսկորների ու գանգատուփի կոտրատուած տարաչափ բեկորներ: Յատակի խեցանօթները հարաւարեւելեան կէսում

էին: Քրեղանի մէջ գտնուեցին գանգատուփի հատուածներ: Անօթներից հիւսիսարեւմուտք վերջոյթների ոսկորներ էին կոտրատած ծայրերով եւ իրար զուգահեռ (աղ. 15): Մարդկային ոսկորներն անատոմիապէս թերի էին, ակնյայտ այրուածքի հետքերով: Խցի կենտրոնում արեւելքարեւմուտք ուղղուածութեամբ ակօս էր, կաւանօթների տակ՝ փոսորակ: Դրանց լիցքը նոյնն էր, ինչ խցինը: Դամբանախուցը լցնելու ընթացքում պարբերաբար ոսկորներ եւ խեցատներ դնելու-նետելու սովորոյթն այստեղ եւս ակնյայտ է:

Տեղադրական իրավիճակը ցուցում է դամբարանի ուշ լինելը թիւ 9 եւ 18 համալիրներից, սակայն որոշ մանրամասներ ենթադրել են տալիս, իսկ յայտնաբերուած նիւթերն (աղ. 15) աւելի հմնաւորում են թիւ 9 դամբարանին յաջորդելը եւ թուազրելը Ք. ա. ժ. դարի կէսերով:

Դամբարան 17: Թիւ 16, 18, 19 եւ 21 դամբարանների միջակայքում էր: Ինքնին չամբողջացող, անկանոն կրոմլեխը (Մ՝ 2,8մ) միանման բազալտից է: Կից էր թիւ 18 եւ 16 դամբարաններին, իսկ թիւ 21 եւ 19 դամբարանները կից էին իրեն (լուս. 1, 2, աղ. 2, 3): Տարածքի հիւսիսարեւելեան հատուածում լիցքը ջրաւազային էր, իսկ մնացեալ մասում սեւահողի բազալտիչով նօսր բազալտ-գետաքարային խառնուրդ էր, որի մէջ առկայ կրոմլեխի տիպի բազալտներն անկանոն տեղադրութեամբ էին: Ծածկը հարթասալերով էր՝ իրարից խիստ տարբերուող անկիւններով: Երկայնական պատերի կտրուածքները հարթասալերով էին երեսպատուած, իսկ լայնական կողմերի երկու հարթասալերը դրուած էին բարձր ու տարբերուող անկիւնով: Դրանց միջակայքում գրեթէ հորիզոնական դիրքով դրուած էին տարաչափ սալեր: Դամբանախցի ամբողջ մակերեսը զբաղեցնող հարթասալերով կառուցուել էր տաշտակ յիշեցնող կերտուածք (աղ. 16): Վերջնական յատակագծով բացուած դամ-

բանախուցը (երկ. 1,26մ, լայն. 0,72մ, խոր. 1,0մ) առանցքով հիւսիսարեւմուտքից հարաւարեւելք էր (270 շեղում արեւմուտք): Շատ անփութօրէն փորուած էր ծովալճային նստուածքային շերտի մէջ: Տաշտականման կառոյցի հարթասալերի տակի լիցքը նօսր գետաքարային բազալտիչով փափուկ, սեւահողաւազային խառնուրդ էր, որի տարբեր հորիզոնների բազմաթիւ կէտերից դուրս էին գալիս խեցատներ: Խցի հիւսիսարեւմտեան եւ հարաւարեւելեան եզրային հարթասալերով ծածկուած հատուածներում բացուեցին ուղեկցող նիւթեր՝ տեղում ճզմուած կաւանօթներ, վերջոյթների ոսկորներ: Հարաւարեւմտեան անկեան մօտ դիմային մասից ընդհանրապէս զուրկ գանգատուփ էր հիմքի վրայ դէպի հարաւ: 15-20 տարեկան աղջկա խիստ թերի եւ կոտրատած մնացորդների վրայ կային այրուածքի ակնյայտ հետքեր: Կենտրոնում ակօսի նմանուող փորուածքը հիւսիսարեւմտեան մեծ խորշը միացնում էր հարաւարեւելեան կողմի փոքրին: Խորշերը լցուած էին նոյն լիցքով: Դրանցից ոչինչ չգտնուեց, իսկ ակօսից գտնուեցին խեցատներ եւ գանգի դիմային մասի մի փոքր հատուած:

Հարթասալերով տաշտականման կառոյցի ամբողջ լիցքից որեւէ նիւթական կամ ոսկրաբանական մնացորդ չգտնուեց: Դրան կից տարածքի տարբեր հորիզոններից նիւթական մնացորդներ յայտնաբերելու փաստը, սակայն, հիմնաւորում է այն ենթադրութիւնը, որ տեղաբնակները միայն այս հատուածն են ընկալել որպէս անհրաժեշտ նպատակային այնկողմեան կեանքի համար, ինչն էլ, փաստօրէն, հիմք է հանդիսացել կառոյցով ակնյայտօրէն սահմանազատելու ու միմեանցից մեկուսացնելու համար: Փաստագրումը մէկ անգամ եւս պաշտամունքային պատկերացումներում կատարուած ակնյայտ տեղաշարժերը, որոնք իրենց արտացոլումն են գտնում

թաղման ծէսի արարողակարգի նորայայտ դրսեւորումներում: Խցի լիցքից գտնուած խեցատների տեղադրական եւ շերտադրական վիճակը ցուցում է դրանց՝ դամբանախցից դուրս ու դամբարանի տարածքից բանական մնացորդների վիճակը թոյլ է տալիս փաստագրել իրականացուած մասնակի դիակիզման եւ լիակատար դիամասնատման իրողութիւնը (հաւանաբար, կատարուել է փափուկ հիւսուածքներից մաքրուած լինելուց յետոյ):

Հիմնուելով տեղադրութեան վրայ կարելի է ասել, որ դամբարանը թիւ 16 եւ 18 համալիրներից ուշ է կառուցուել, սակայն որոշ մանրամասներ ենթադրել են տալիս, իսկ յայտնաբերուած նիւթերը (աղ. 16) հիմնաւորում են, որ այն ժամանակագրօրէն յաջորդում է թիւ 16 դամբարանին եւ թուազրում է Ք. ա. ժ. դարի կէսերով:

Դամբարան 18: Թիւ 7, 16, 17, 21 եւ 32 դամբարանների միջակայքում է: Ինքնին չամբողջացող, անկանոն կրոմլեխը (Մ՝ 3,35մ) հիմնականում ծակոտկէն բազալտից էր: Կցակառոյց էր թիւ 7 դամբարանին, իսկ թիւ 16, 17, 21 եւ 32 դամբարանները կից էին (լուս. 1, 2, աղ. 2, 3): Տարածքը լցուած էր ջրաւազի նօսր պարունակութեամբ սեւահողի բազալտիչով տարտեսակ քարերի (հիմնականում գետաքարի) խիտ խառնուրդով: Հսկան անկիւնում կրոմլեխատիպ բազալտ էր (աղ. 17): Ծածկը տարաչափ հարթասալերից էր՝ տարբեր անկիւններով, հիւսիսարեւմտեան եզրայինը՝ տեղում, անկիւնով երկտարեւոր, հարաւարեւելեան ամբողջական կուած, հարաւարեւելեան միջակայքում փոքր թեքութեամբ երկուսի միջակայքում ուղղանկիւնատիպ փոքր տարածք էր, որն արեւելքից եզրափակուած էր նոյն հաստութեամբ, տարաչափ ու բազմաշերտ հարթասալերով, իսկ արեւմտեան կողմից միաշերտ գրեթէ ուղղահայեաց դիրքով դրուած հարթասալերով (աղ. 17): Հարթասալերի (յատկապէս՝ արեւմտեան կողմի)

տեղադրական եւ շերտագրական մանրամասները թոյլ են տալիս եզրակացնել, որ հիւսիսարեւմտեան երկտակուածը վերջնական դիրքով տեղադրելուց յետոյ տեղում միտումնաւոր կտորել են, բաժանել երկու մասի: Նման իրավիճակ արդէն փաստուել է թիւ 5 դամբարանում, բայց՝ այլ աշխարհագրական տեղադրութեամբ: Տարածքի լիցքի վերին հորիզոնից դուրս եկաւ մի քանի խեցատ: Դամբանախուցը (երկ.՝ 1,53մ, լայն.՝ 0,9մ, խոր.՝ 0,7մ) հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք էր (300 շերտում արեւմուտք), փորուած ծովալճային նստուածքային շերտում եւ լցուած սեւահողաւազային բաղադրիչով նօսր գետաքարերի խառնուրդով, որը, յատակին հասնելով, քարազրկուած էր: Անհարթ յատակի տարբեր մասերում բացուած 25-30 տարեկան տղամարդու կմախքի տարբեր հատուածների խիստ թերի մնացորդները կտորատուած էին, այրուածքի ակնյայտ հետքերով: Հարաւարեւելեան պատի մօտ գանգատուփի մնացորդներ էին՝ անկանոն կոյտով: Դիմային հատուածից ոչ մի բեկոր չկար: Հիւսիսարեւելեան անկեան մօտ բացուած վերջոյթների ոսկորների փոքր հատուածները անբնական դասաւորութեամբ էին ու կտորատուած: Հիւսիսարեւմտեան պատի կենտրոնական մասում ձուածե մակերեսով հարթասալի բեկորը դրուած էր խիստ հորիզոնական դիրքով: Դրա վրայ եւ ներքեւում տարբեր ոսկորների բեկորներ էին: Տարբեր հորիզոններից գտնուած զանազան կաւանօթների սակաւաթիւ կտորները կտորուել էին դամբանախցից դուրս ու դամբարանի տարածքից հեռու, հաւանաբար՝ այնտեղ, որտեղ եւ կմախքը: Մնացորդները լիցքի կատարման ընթացքում որոշակի փուլից պարբերաբար դրուել-աւելացուել էին խառնուրդին: Խցի հարաւարեւելեան անկեան մօտի խորշը փորուած էր նաեւ պատի կտորուածքի մէջ (աղ. 17) եւ նոյնական լիցքով էր, որից ոչ մի մնացորդ չգտնուեց:

Գտնուած նիւթերը (աղ. 17) հնարաւորութիւն են տալիս թիւ 18 դամբարանը թուագրելու Ք. ա. ժ.Գ. դարի կէսով:

Դամբարան 19: Թիւ 15, 16, 17, 20 եւ 22 դամբարանների միջակայքում է: Ինքնին չամբողջացող, անկանոն կրոմլեխը (Մ՝ 4,5մ) տարբեր բաղալտներից էր: Թիւ 17 ու 22 եւ 16 ու 22 դամբարանների միջեւ կառուցուած լրացուցիչ նորակառոյց հատուածներով կից էր դրանց, իսկ թիւ 20-ը կցակառոյց է (լուս. 1, 2, աղ. 2, 3): Տարածքի արեւմտեան հատուածում լցուած էր նօսր աւազով սեւահողային բաղադրիչով տարատեսակ քարերի (մեծ մասամբ ոչ խոշոր գետաքարի) խառնուրդ, իսկ արեւելեանում ակնյայտօրէն գերակշռում էր մանրահատիկ ջրաւազը: Ծածկը տարբեր մեծութեան հարթասալերից էր: Հիւսիսարեւելեանները գրեթէ հորիզոնական էին, իսկ հարաւարեւմտեան հատուածում գրեթէ ուղղահայեաց անկիւնով էլ կային: Հարթասալերի միջակայքերում ազատ թողնուած տարբեր չափերի հատուածներ էին, իսկ արեւմտեան կողմի եզրամասերը դրուած են դամբանախցի մէջ եւ ոչ թէ ծովալճային նստուածքային շերտի մակերեսին (աղ. 18): Լիցքը սեւահողաւազախճային բաղադրիչով խիտ քարային խառնուրդ էր (հիմնականում՝ տարաչափ գետաքարեր): Այն շարունակուեց մինչեւ նիւթերի խորութեան մակարդակ, սակայն ոչ մի նիւթ չգտնուեց: Դամբանախուցը (երկ.՝ 1,72մ, լայն.՝ 1,03մ, խոր.՝ 1,1մ) առանցքով հիւսիս-արեւելքից հարաւ-արեւմուտք էր (560 շերտում արեւելք), փորուած ծովալճային ոչ համասեռ ամրութեամբ շերտում: Դամբանախցի յատակամերձ հորիզոնում լցուած էր ակնյայտօրէն նախորդից տարբերուող, գրեթէ քարազուրկ, նօսր ջրաւազի բաղադրիչով, սեւահողի նմանուող փափուկ կաւահող, որից գտնուեցին հասուն տարիքի տղամարդու խիստ թերի կմախքի ոսկորներ՝ անկանոն դրուած խցի տարբեր հատուածներում, այրուածքի

ակնյայտ հետքերով: Հարաւարեւմտեան մասում դրուած փոքր անօթի մէջ մարդկային ոսկորի կտոր էր, իսկ յատակի տարբեր մասերից գտնուեցին գանգատուփի մի քանի մանր բեկորներ: Սակաւաթիւ խեցատների տեղադրական եւ շերտագրական վիճակները վկայում են դրանց՝ խցից դուրս ու դամբարանի տարածքից հեռու կտորուած եւ լիցքի սկզբնական փուլում դրուած լինելու մասին: Մարդկային ոսկորաբանական սակաւաթիւ մնացորդների առկայ վիճակը թոյլ է տալիս հիմնաւորուած փաստագրել մասնակի դիակիզման եւ լիակատար դիամանատման իրողութիւնը: Հարաւ-արեւմուտքում բացուած տձեւ փոստրակը լցուած էր նոյնատիպ խառնուրդով (առանց որեւէ նիւթական մնացորդի): Ուսումնասիրուած համալիրներին միակն է, որի լայնական պատերը տարբեր երկարութեամբ են (աղ. 18):

Յայտնաբերուած նիւթերը (աղ. 18) թոյլ են տալիս դամբարանը թուագրել Ք. ա. ժ.Գ. դարի II կէսով:

Քառակուսու արեւելեան կողմում ակնյայտ է կենտրոնաձիգ սկզբունքով կցակառոյց կրոմլեխների մէկ այլ ցանցաքառակուսու բացուել է նրա եզրափակիչ հատուածի մի մասը միայն, իսկ կենտրոնաձիգութեան առանցքն ուղղուած է դէպի արեւելք:

Դամբարան 20: Թիւ 19, 22 եւ 26 դամբարաններից հարաւ էր: Ինքնին չամբողջացող, անկանոն կրոմլեխը (Մ՝ 3,2մ) հիմնականում խիտ բաղալտից էր: Կից էր թիւ 19 եւ 22 դամբարաններին, իսկ թիւ 26-ը կցակառոյց էր (լուս. 1, 2, աղ. 2, 3): Տարածքը լցուած էր սեւահողային բաղադրիչով նօսր քարերի (հիմնականում՝ խոշոր գետաքարի) խառնուրդով, իսկ խցի եզրաձի մօտ անկանոն ցրուած էին կրոմլեխաւոր մօտ անկանոն ցրուած էին կրոմլեխաւորներ (աղ. 19): Հնադարեան բուսահողի փորուածքում տեղադրուած բաղալտէ

2 խոշոր ծածկասալերն իրենց քարտեսակով տարբերուած էին. նման էին թիւ 15 դամբարանի սալերին: Միակ հարթասալային տիպի քարը դրուած էր արեւմտեան կողմում՝ թեք, դէպի ծածկասալերը, որոնցից արեւմտեան կողմինը շերտաւորուած էր (լուս. 1, աղ. 19): Չարդուել էր տեղում (լուս. 1, աղ. 19): Ծածկասալերի վրայ լցուած էր քարից եւ Մածկասալերի բացարձակապէս գերծ, ջրանոյնիսկ խճից բացարձակապէս գերծ, ջրաւազի բարակ շերտ: Դամբանախուցը (երկ.՝ 1,62մ, լայն.՝ 0,97մ, խոր.՝ 0,65մ) առանցքով գրեթէ արեւելք-արեւմուտք էր (40 շերտում դէպի հարաւ, աղ. 19): Անփոյթ շերտում դէպի հարաւ, աղ. 19): Դոմփորուած էր հատուածաբար թոյլ ծովալճային շերտում: Լցուած էր սեւահողաւազային բաղադրիչով խիտ քարային խառնուրդ (ոչ խոշոր գետաքար ու խիճ), որի անմիջապէս ծածկասալերին յաջորդեց մակարդակից սկսած, տարբեր հորիզոնեաներից գուրս եկան մարդու փոքր կէտերից գուրս եկան մարդու գանգատուփի մի քանի բեկոր, վերջոյթների ոսկորների կտորներ եւ խեցատներ, իսկ անհարթ յատակին՝ 2-3սմ ամուր կրային բնական շերտում զմուսուած վերջոյթների ոսկորների 2 փոքր հատուածներ եւ կտորատուած էին: Հարաւարեւմտեան անկիւնում առկայ խորշը լցուած էր նոյնատիպ խառնուրդով, որից նիւթական մնացորդի ոչ մի բեկոր չգտնուեց: Տղամարդու ոսկորների սակաւաթիւ մնացորդների եւ դրանց հետ գտնուած զանազան կաւանօթների ոչ բազմաթիւ բեկորների շերտագրական եւ տեղադրական ներքին շերտագրական հիմնաւորուած ցուցում մանրամասները հիմնաւորուած ցուցում են դրանց՝ դամբանախցից դուրս ու դամբարանի տարածքից հեռու վայրում կտորատուած լինելը (հաւանաբար՝ այնտեղ, որտեղ եւ մարդկային կմախքը, որի խիստ թերի մնացորդները խեցատներով հանդերձ լիցքի կատարման ընթացքում պարզերձ լիցքի կատարման ընթացքում պարբերաբար աւելացուել են): Քառակուսու մակերեսի համալիրներում այս երեւոյթի արդէն իսկ բաւականաչափ առկայութիւնը

ցուած կաւանօթները երկշարք խմբուած էին: Դրանցից հարաւ-արեւելք բացուած վերջոյթի ոսկորի հատուածից բացի, ուրիշ ոչ մի մարդաբանական նիւթ չփաստուեց: Դամբանիցի կենտրոնական մասից դէպի հիւսիսարեւելեան անկիւն ձգուող փոսորակը տձեւ էր, ոչ խոր եւ լցուած էր նոյն լիցքով, առանց որեւէ նիւթի: Նիւթական մնացորդների շերտազրական եւ տեղադրական իրավիճակները թոյլ են տալիս եզրակացնել, որ այստեղ եւս կիրառուել է լիցք կատարելու տարբեր փուլերում պարբերաբար նիւթեր դնելու-սփռելու սովորոյթը:

Յայտնաբերուած կաւանօթները (աղ. 22) հնարաւորութիւն են տալիս դամբարանը թուագրել Ք. ա. ժ. Գ. դարի I կէսով:

Դամբարան 24: Թիւ 23, 25, 27, 28 եւ 29 դամբարանների միջակայքում էր: Ինքնին չամբողջացող, անկանոն կրոմլեխը (Մ՝ 2,85մ) տարբեր բազալտներից էր: Կցակառույց էր թիւ 29 դամբարանին, իսկ թիւ 23 եւ 27 դամբարանները կից էին (լուս. 1, 2, աղ. 2, 3): Տարածքում լցուած էր սեւահողային բաղադրիչով ոչ խոշոր գետաքարերի խառնուրդ: Ծածկը տարաչափ հարթասալերից էր: Կենտրոնականը խոշոր էր: Երկու կողմերից սերտորէն յարում էին տարաչափ երկուսը: Բոլոր հարթասալերը փոքր-ինչ թեքուած էին դէպի արեւմուտք (աղ. 23): Անմիջապէս հարթասալերի տակ լցրած սեւահողային բաղադրիչով նօսր խճաքարային խառնուրդից գտնուեցին խեցատ եւ անորոշ ոսկորի բեկոր: Լիցքն աստիճանաբար դարձաւ կաւահողային բաղադրիչով խիտ քարային խառնուրդ, հատուածաբար՝ ամուր: Դամբանախուցը (երկ.՝ 1,56մ, լայն.՝ 0,96մ, խոր.՝ 0,8մ) առանցքով հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք էր (100 շեղում արեւելք-արեւմուտք առանցքից), փորուած էր ծովալճային նստուածքային ամուր շերտում: Խցի հիւսիսարեւմտեան անկիւնում եւ մերձ հատուածում խմբով բացուած կաւանօթներից 3-ը տեղում էին ջարդուած, իսկ 2

ամբողջականները դրուած էին թեք, բերաններով դէպի տարբեր կողմեր: Հարաւ-արեւմտեան անկիւնում բացուած խեցեղէնի բեկորների կոյտը նախորդ կաւանօթներից բարձր էր: Խեցատների շերտազրուութիւնը ցուցում է, որ խեցեղէնը կտրուել է խցից դուրս եւ հատուածների մի մասն աւելացուել է լիցք կատարելու տարբեր փուլերում: Կաւանօթներից արեւելք բացուած բրոնզէ ապարանջանի միջի՝ 3-5 տարեկան երեխայի ձեռքի ոսկորների հատուածներն այրուածքի հետքերով էին (ածխացման աստիճան): Դամբանախցի հարաւարեւմտեան անկեան մօտի փոսորակը նոյն լիցքով էր, առանց որեւէ նիւթի: Խցում փաստազրուած շերտազրական եւ տեղադրական վիճակը փաստում է կատարուած դիակիզման, լիակատար դիամասնատման եւ այլ վայրում կտրուած կաւանօթների մի մասը լիցքին պարբերաբար աւելացնելու սովորոյթի մասին: Խեցեղէնի վերականգնումից յետոյ վերոյիշեալը լիովին հաստատուում է:

Յայտնաբերուած նիւթերը (աղ. 23) հնարաւորութիւն են տալիս դամբարանը թուագրել Ք. ա. ժ. Գ. դարի I կէսով:

Դամբարան 25: Թիւ 23, 24, 26 եւ 27 դամբարանների միջակայքում էր (լուս. 1, 2, աղ. 2, 3):

Դամբարան 26: Թիւ 20, 22, 23 եւ 25 դամբարանների միջակայքում էր (լուս. 1, 2, աղ. 2, 3):

Դամբարան 27: Թիւ 24, 25 եւ 28 դամբարանների միջակայքում էր (լուս. 1, 2, աղ. 2, 3): Ըստ ամենայնի, թիւ 25 եւ 28 դամբարանների կրոմլեխների միջեւ կառուցուած նոր հատուածը սրա համար է եւ հիմնաւորում է այն դիտարկումը, որ օգտագործուել է ազատ մնացած փոքր մակերեսով ուղղանկիւնաձեւ տարածքը (Մ՝ 2,05մ): Լցուած էր սեւահողաւազային բաղադրիչով բազմատեսակ քարերի խիտ խառնուրդով: Հորիզոնական 2 հարթա-

սալերն առանցքով ուղղուած էին հիւսիսից հարաւ (աղ. 2, 24): Դրանց տակ լցուած էր սեւահողաւազային բաղադրիչով խճաքարային խիտ խառնուրդ: Դամբանախուցը (երկ.՝ 1,17մ, լայն.՝ 0,82մ, խոր.՝ 0,55մ) նոյնպէս առանցքով ուղղուած էր հիւսիսից հարաւ (100 շեղում արեւելք, աղ. 24): Հիմնահողային էր, փորուած հնադարեան բուսաշերտում, մինչեւ ծովալճային նստուածքային ամուր գանգուածի մակերեսը: Խցում բացուեցին 4 փոքր կաւանօթներ (աղ. 24) եւ մարդու մատի 1 ոսկոր: Դրանք անմիջապէս նստուածքային շերտի վրայ էին (աղ. 24): Նիւթերը հնարաւորութիւն են տալիս դամբարանը թուագրել Ք. ա. ժ. Գ. դարի I կէսով:

Դամբարան 28: Թիւ 24, 27, 29 եւ 30 դամբարանների միջակայքում էր (լուս. 1, 2, աղ. 2, 3):

Դամբարան 29: Թիւ 24, 28 եւ 30 դամբարանների միջակայքում էր (լուս. 1, 2, աղ. 2, 3): Ինքնին չամբողջացող, անկանոն կրոմլեխը (Մ՝ 1,68մ) տարբեր բազալտներից էր: Կցակառույց էր թիւ 28 եւ 30 դամբարաններին: Կից էր թիւ 24 դամբարանը: Տարածքը լցուած էր սեւահողաւազային բաղադրիչով բազմատեսակ, ոչ խոշոր քարերի խառնուրդով, կար նաեւ կրոմլեխատիպ բազալտի 2 կտոր: Փոքր հարթասալով եւ դրան հիւսիսարեւմտեան կողմից յարող բազալտակտորով կառուցուած ծածկն ընդհանուր թեքութիւն ունէր դէպի հարաւ-արեւմուտք: Հարթասալի տակ լցուած էր ամուր սեւահողային բաղադրիչով քարախճային խառնուրդ, որի տարբեր հորիզոններից դուրս եկան վերին ծնօտի մաս, գանգատուփի 1 կտոր եւ խոզովակաձեւ ոսկորի բեկորներ: Դամբանախուցը (երկ.՝ 1,1մ, լայն.՝ 1,0մ, խոր.՝ 0,3մ) խուցը (երկ.՝ 1,1մ, լայն.՝ 1,0մ, խոր.՝ 0,3մ) ղեղեկեցում էր կրոմլեխների միջակայքի ողջ մակերեսը, առանցքով հիւսիս-արեւելքից հարաւ-արեւմուտք էր (480 շեղում արեւելք, աղ. 25), անկանոն ուղղանկիւն յատակագծով փորուած էր մինչեւ ծովա-

լճային նստուածքային շերտի բնականից անհարթ մակերես: Դրա վրայ բացուած 2 կաւանօթները դրուած էին տարբեր դիրքերով եւ շրջապատուած էին մոխրաշատ կաւահողով: Դրա մէջ գտնուեցին 6-7 տարեկան երեխայի գանգատուփի բեկորներ՝ այրուածքի ակնյայտ հետքերով:

Ըստ նիւթերի (աղ. 25)՝ դամբարանը թուագրուում է Ք. ա. ժ. Գ. դարի I կէսով:

Դամբարան 30: Թիւ 28, 29, եւ 35 դամբարանների միջակայքում է (լուս. 1, 2, աղ. 2, 3):

Դամբարան 31: Հիւսիսարեւմտեան չկառուցապատուած հատուածի կենտրոնում էր եւ կից էր միայն թիւ 32 դամբարանին (լուս. 1, 2, աղ. 2, 3): Վերգետնեայ պատկերը հիմնովին աւերուած էր. քարերը հանուել եւ օգտագործուել էին ըստ ամենայնի մինչեւ հարաւ-արեւելքից թիւ 32 դամբարանի կցակառուցումը, որի ժամանակ չեն տեղահանուել եւ հեռացուել նոյնիսկ այն քարերը, որոնք խանգարել են առաւել կանոնիկ կառուցապատմանը: Անուշաքան միջակայքի ազատ թողնուած գամ դրանց միջակայքի ազատ թողնուած տարածքը լրացուած է: Ընդհանուր տեղադրական պատկերը թոյլ է տալիս ենթադրել, որ հարաւ-արեւմուտքում առկայ թաղերը, որ հարաւ-արեւմուտքում կրոմլեխահատուած է, իսկ նրանից հիւսիս-արեւելք բացուած դամբանախուցն է (աղ. 26): Խցիցուածը դամբանախուցում էր քարապարագիծը սահմանազատուած էր քարաշարով, իսկ կենտրոնի բազալտ քարից երկուսը, իսկ կենտրոնի բազալտ քարից երկուսը գրեթէ հաւասար մասերի: Դրա հարաւարեւելեան կողմում դրուած այլ որակի բազալտակտորով կարծես «փակել» էին դամբանախցի պատի մէջ թողած «դուռը» (աղ. 26): Ներկայացուած համալիրը շինաքարի տեսակներով ակնյայտորէն տարբերուում էր միւս դամբարաններից. օգտագործուած բազալտը մի քանի տեսակի էր: Պահպանուած քարային կառուցում առկայ էր մէկ գետաքար, բայց ոչ ծովալճային

մուտք ձգող չկառուցապատված, տարբեր լայնութիւն ունեցող, յատկազօծով տձեւ, սահմանազատող տարածքը: Սակայն նշուած դամբարանների անմիջական մերձակայքի տեղադրական մանրամասների ճարտարապետայտակազօծային համեմատական վերլուծութիւնը եւ թիւ 35 համալիրի անկանոն կրոնիկի հարաւարեւմտեան հատուածի փաստագրուած յատակազօծային առկայ առանձնայատկութիւնը, որի մասին արդէն խօսուել է, թոյլ են տալիս ենթադրել, որ վերը նշուածներն, ըստ ամենայնի, արեւելեան կողմի կցակառոյց ցանցի բաղկացուցիչներ են: Եթէ թիւ 19 դամբարանի առկայ տեղադրութեան առնչութեամբ գրեթէ ոչ մի հարց չի առաջանում, բացառութեամբ այն բանի, որ նրա տեղադրութիւնը յատկազօծային առումով կարելի էր համեմատաբար աւելի կանոնաւորուած տեսքով իրականացնել՝ մի փոքր հիւսիս-արեւելք տեղաշարժած, ապա թիւ 34-ի տեղադրութեան կապակցութեամբ կարելի է տարակուսել, քանի որ, չնայած ազատ, չկառուցապատված հատուածների առկայութեանը, կառուցել են այդ փոքր մակերեսով միջակայքում: Այս եւ քառակուսու տարբեր հատուածներում յաջորդաբար, կից կառուցուած մի շարք այլ համալիրների յատկազօծային տեղակայման իրողութիւններում դիտուել է մերձակայ շրջապատում գոյութիւն ունեցող չկառուցապատված տարածքների թուացեալ անտրամաբանական ազատ թողնելու միտում, եւ դա այն դէպքում, երբ դրանցով վերոյիշեալ տարածքների լրացումն առաւել նպատակայարմար կը լինէր ինչպէս տարածքի ռացիոնալ օգտագործման, այնպէս էլ՝ կառուցապատման ճարտարապետաշինարարական կանոնիկութեան առումով: Տարածքի նման խիստ նօսր կառուցապատման առկայ վիճակը եւ կցակառուցուած խիտ ցանցի բուն տարածքում հատուածների ազատ թողնելու իրողութիւնն, ըստ ամենայնի, պէտք է դիտարկել

հոգեւոր-պաշտամունքային պատկերացումներից դուրս, իբրեւ այդ դամբարանների տէրերին առնչող կենցաղա-կիրառական ոլորտի պարտադիր կատարման ենթակայ եղելութիւն:

Ներկայացուած քառակուսու փաստագրուած կենտրոնաձիգ միտումով կից ու յաջորդական կառուցապատուածութիւնը, հեղինակի կարծիքով, քիչ է հաւանական, որ պայմանաւորուած լինի ընտանեկան-արիւնակցական եւ ազգակցական կապերով: Ըստ էութեան, այս եզրակացութեան առաջին լուրջ կոտուանն արեւմտեան հատուածի կենտրոնաձիգ ցանցի ժամանակադրական ձգուածութիւնն է՝ Ք. Ա. ԺԴ. դարի II կէսից մինչեւ Ք. Ա. ԺԳ. դարի II կէս: Եթէ նման կառուցապատումը յիշեալ կապերով թելադրուած լինէր, ապա այս պատկերը համաժամանակեայ որեւէ այլ յուշարձանում եւս կը կրկնուէր²⁰: Մինչդեռ բազմաքանակ ուսումնասիրութիւններում փաստագրուած դրուագներով համալիրները միայն յարակից, գուցէ՝ կից կառուցուած լինելու եղելութեամբ են յիշեցնում քննարկող իրողութիւնը: Նման կապերի հնարաւոր առկայութեան վերջնական ապացոյց կարող է ծառայել միայն ժամանակակից մեթոդներով կատարուած ԴՆԹ հետազօտութիւնների դրական արդիւնքը: Համալիրների տեղադրա-յատակազօծային կցա-

²⁰ Լճաշէնի դամբարանադաշտում Լ. Պետրոսեանի պեղած 225 համալիրների շարքում ակնյայտ մասն կցակառուցմամբ միայն մէկ դրուագ կայ՝ չորս համալիրից բաղկացած, իսկ մնացեալը միմեանց խիստ մօտ կամ յարակից կառուցուած անկախ կրոնիկներ ունեցող դամբարաններ են (Գիթերը պատրաստուում են հրատարակութեան): Նման պատկեր մտն Կոթթան գիւղի մօտ (Ս. Դեւեջեան, Ս. Հոթոսեան, Դամբարանների պեղումներ Լոռու Կոթթան գիւղում, - Հիմնադրամատչի մշակոյթը, XIV պրակ. Գիթեր հանրապետական գիտական աստաշրջանի, Երեւան, 2008, էջ 113 եւ Գլ. 1), իսկ Ծաղկալանցի համալիրում ուսումնասիրուած 121 համալիրների շարքում առանձին համալիրների կցակառուցման մի քանի դրուագ է փաստագրուել (պեղումները՝ Ֆիրդուս Մուրադեանի):

կառոյց մանրամասների համեմատական վերլուծութիւնը յանգեցնում է այն հետեւութեան, որ յուշարձանի մի որոշակի մեծ հատուած²¹ շրջապատի բնակավայրերի համար իբրեւ «պանթէոն» է ծառայել: Մերձակայքում այնպիսի խոշոր բնակավայր չի փաստագրուած, որի մեծաթիւ բնակչութեան եւ տարածքի անբաւարար լինելու պատճառով դիմէին նման ցանց կառուցելու հարկադրական քայլին, իսկ ազատ թողած հատուածները ճիշտ հակառակն են ապացուցում: Ըստ երեւոյթին, իւրաքանչիւր ինքնուրոյն, կենտրոնաձիգ միտումով համալիր ցանց ներառում է տուեալ համայնքի անդամների դամբարաններ, որով ասես մէկ անգամ եւս ցուցադրուում է նրանց առանձին եւ անկախ լինելը: Նման մեծաքանակի եւ պատուի արժանանալու չափորոշիչների մասին խօսելիս սոցիալական անհասարութեան փաստարկով բացատրելը հաւանաբար լիովին չի համապատասխանի իրականութեանը նաեւ այն պատճառով, որ բացառութեամբ մակերեսով շատ փոքր մի քանի դամբարանի եւ ամենամեծ թիւ 33 դամբարանի, մնացեալի զբաղեցրած տարածքներն ընդհանուր առմամբ չեն տարբերուում միմեանցից եւ կարծես մօտաւոր նոյնական չափի են բերուած իւրաքանչիւրի համար յատուկ նախանշուած տեղադրական վայրում (աղ. 2, 3), թէպէտ նիւթական մշակոյթի մնացորդների քանակն ու նաեւ տեսակները շատ դէպքերում ակնյայտօրէն տարբեր են: Հնարաւոր է նաեւ, որ այստեղ թաղուելն արդէն իսկ նշանակի սոցիալական անհասարութեան դրսեւորում՝ անկախ տարիքից եւ սեռից:

Հաւանաբար Ք. ա. ԺԴ. դարի կէսերին²² տեղաբնակների այնկողմեան կեանքի եւ դրա հետ կապուած բուն աշխարհընկալման պատկերացումներում կատարուած լուրջ փոփոխութիւնները, որոնք էլ իրենց հերթին էականօրէն ազդել են թաղման ծէսի վրայ, խարսխուած են այս յուշարձանում գոյութիւն ունեցած հոգեւոր-չարձանում գոյութիւն ունեցած հոգեւոր-պաշտամունքային շինութեան կամ կենտրոնի գաղափարածիսական դերի բարձրացման հետ, որի ներկայութեան պատճառով էլ տարածքում ծաւալուել են յետագայ նման կառուցապատումները:

Դիտարկելի առաջին փոփոխութիւնը կապուած է ծածկի շինանիւթի տարբերութեան հետ: Ուսումնասիրուած քառակուսու մակերեսի ուղբորոնգեղարեան դամբարանների ծածկերը համատարած կառուցուած են բացարձակապէս միանման որացուած են բացարձակապէս միանման որացուած կական բնութագրիչներ ունեցող բազալտ կական տարաչափ սալատիպ բեկորներով՝ քարի տարաչափ սալատիպ բեկորներով հարթասալերով, որոնք այն աստիճան հարմար է կարծել, թէ նման են, որ նոյնիսկ կարելի է կարծել, թէ նոյն ժայռաբեկորից են կտրուած: Այս նոյն ժայռաբեկորից են թիւ 15, 20 եւ շարքում բացառութիւն են թիւ 2 համալիրները: Առաջին երկուսի ծածկասալերը բաւականին նման կուսի ծածկասալերը բաւականին են քարատեսակից են եւ տարբերում են մնացեալից: Թիւ 2 դամբարանի երկու ծածկասալերն ակնյայտօրէն տարբերում են. պատրաստուած են այնպիսի բազալտատեսակից, որը քառակուսու մակերեսի ոչ մի այլ դամբարանային կառոյցում չի հանդիպում: Դրանց հետ համադրուած, օգտագործուած է մէկ հարթասալ: Այս օգտագործում է սկզբնաւորում ծածկերի դամբարանով է սկզբնաւորում ծածկերի եւ նաեւ դրանց տակ բացայայտուած տարբեր տիպի կերտուածքների միայն հարթասալերով կառուցման իրողութիւնը: Սրա գաղափարածիսական հենքի մեկնաբանման փորձի համար առկայ նիւթերը դեռեւս բաւական չեն: Դիտարկման հիմնաւորման փաստարկ կարելի է համարել նաեւ քառակուսու պեղումով միջին բրոնզեդարեան թիւ 31 դամբարանի ծածկասալը, որը եւս հարթասալերի տեսակից է:


²¹ Ցաօք, այսօր արդէն հնարատր չէ Գրա կոնկրետ սահմանները Գշել:
²² Ըստ քառակուսու մակերեսում բացուած ՈԻԲ հնագոյն համալիրի ժամանակագրութեան, յետագայ աշխատանքների արդիւնքում հնարատր է աւելի վաղ թուագրութեան հիմքեր լինել:

Ներկայացված աշխատանքի նման ծավալը հնարաւորութիւն չի տալիս անդրադառնալու վերջնական ուսումնասիրուած բոլոր դամբարանների վերաբերեալ տեղեկութիւններին ամբողջապէս եւ թէկուզ ՈՒԲ առկայ համալիրների շրջանակներում կատարել լիակատար համեմատական վերլուծութիւն: Փաստագրուած ամբողջ նիւթը հնարաւորինս հակիրճ, բայց լիակատար ներկայացնելն առաջին հեր-

թին այն գիտական շրջանառութեան մէջ ղնելու նպատակ է հետապնդում: Ակնկալուում է քննարկումների ընթացքում, հրապարակումներում, հնարաւոր արձագանքների, ինչպէս նաեւ լրացումների միջոցով համոզուել փաստագրումների կապակցութեամբ կատարուած եզրայնագումների եւ ենթադրութիւնների հաւանական ճշմարտացիութեան մէջ:



Լուս. 1




Լուս. 2



Աղ. 1



Աղ. 2




Աղ. 3




Աղ. 4


Աղ. 5



Աղ. 6




Աղ. 7




Աղ. 8

Աղ. 9




Աղ. 10


Աղ. 11




Աղ. 12




Աղ. 13




Աղ. 14




Աղ. 15




Աղ. 16




Աղ. 17




Աղ. 18




Աղ. 19




Աղ. 20




Աղ. 21



Աղ. 22




Աղ. 23




Աղ. 24

Աղ. 25




Աղ. 26


Աղ. 27



Աղ. 28



Աղ. 29



Աղ. 30

